

ՏԵՂԵԿԱՏՈՒ

DIEGHIEGAIDOLU

ديجيجادو

Հրատարակութիւն Գահիրէի ՀԲԸՄ-ի

نشرة جمعية القاهرة الخيرية الأرمنية العامة



ԾԻԱԾԱՆ ՄԱՆԿԱԿԱՆ ԵՐԳՉԱԽՈՒՄԻՄԲ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՀԲԸՄ-ի Նախագահ Պերճ Սեդրակեանի Նոր Տարւան Ողջոյնը1

Հաղորդագրութիւն. Սուրբ Ծննդեան Եւ Աստուածայայտնութեան
Տօնը Գափրեի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ Մէջ2

ՀԲԸՄ - Մամլոյ Հաղորդագրութիւն3

Քնահատանքի Եւ Երախտագիտութեան Ընդունելութիւն
Գափրեի ՀԲԸՄ-էն Ներս6
ՀԲԸՄ-ի կայքէջէն քաղեց՝ Անայիս Ծիգմեճեան

Գափրեի ՀԲԸՄ-ը Կը Պարգեւատրէ Գերազանցիկ Ուսանողները8
ՀԲԸՄ-ի կայքէջէն քաղեց՝ Անայիս Ծիգմեճեան

Անդրանիկը «Ծիածանով»10
Մարուշ Երամեան

ՀԲԸՄ-ի Կեդրոնական Վարչական Ժողովի Անդամ
Դոկտոր Երուանդ Զօրեան՝ Սիւտփսիս Արմենիայի Նախագահ.....12

«Արեւմտահայերէնը 21-րդ Դարուն»:
Գիտաժողով՝ Օքսֆորտ Համալսարանին Մէջ13
Համադրեց՝ Շաքէ Մարգարեան

Հայ Ժողովուրդի Պատմութիւնը Ճաբոներէն.....15
Արծուի Բախչինեան, «Ազգ» շաբաթաթերթ

Գափրեի ՀԲԸՄ-ի «Ծիածան» Մանկապատանեկան Երգչախումբը
Կը Դիմաւորէ Կադանդ Պապան.....16
ՀԲԸՄ-ի կայքէջէն քաղեց՝ Անայիս Ծիգմեճեան

Ս. Թերեզայի 2015-ի Տարեկան Մրցաշարը17
Սօսի Ներետեան-Յակոբեան

Հելիոպոլսոյ ՀԲԸՄ ՆՈՒՊԱՐԻ Կադանդի Պազարը18
Սօսի Ներետեան-Յակոբեան

Խթման Տօնակատարութիւն Հելիոպոլսոյ ՀԲԸՄ ՆՈՒՊԱՐԵՆ Ներս.....19
Սօսի Ներետեան-Յակոբեան

Եգիպտահայ Համայնքը Միասնաբար Կը Տօնախմբէ Նոր Տարին20
ՀԲԸՄ-ի կայքէջէն քաղեց՝ Անայիս Ծիգմեճեան

Անդամական

ԽՄԲԱԳԻՐ
Շաքէ Մարգարեան

ՕԳՆԱԿԱՆ ԽՄԲԱԳԻՐ
Անի Պողոսեան

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ
ԽՈՐՀՐԴԱՏՈՒ
Պերճ Թերզեան

ՍՐԲԱԳՐԻՉ
ՎԵՐՍՏՈՒԳԻՉ
Անայիս Ծիգմեճեան

ԳԵՂԱՐՈՒԵՏԱԿԱՆ
ՁԵՒԱԽՈՐՈՒՄ
Շահէ Լուսարարեան

ՀԱՄԱԿԱՐԳԶԱՅԻՆ
ՇԱՐՈՒԿԾԶ
Անի Պողոսեան
Վարդուի Արթինեան

Թիւ 78 Նոր Շրջան
ՅՈՒՆՈՒՄԱՐ 2016

Գափրեի ՀԲԸՄ-ի
Լուրերուն հետեւեցէք
www.agbuegypt.com
կայքէջով

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ
Nubar Printing Press

ՀԱՐՄ-Ի ՆԱԽԱԳԱՀ ՊԵՐՃ ՍԵԳՐԱԿԵԱՆԻ ՆՈՐ ՏԱՐՈՒԱՆ ՈՂՋՈՅՆԸ՝ ՄԻՈՒԹԵԱՆ ԲԱՐԵՐԱՐՆԵՐՈՒՆ, ԳՈՐԾԱԿԻՑ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ, ԿԱՌՈՅՑՆԵՐՈՒՆ ԵՒ ԱՆԳԱՄԱԿՑՈՒԹԵԱՆ



Իր աւարտին մօտեցող այս տարեշրջանը, Յեղասպանութեան 100-ամեակի ծիրէն ներս եւ անկէ անդին, մեր ազգին, հայրենիքին եւ Միութեան համար պիտի նշուի իր անսախընթաց իրադարձութիւններով եւ իրագործումներով, որոնք լաւագոյնս դրսեւորեցին Հայրենիքի եւ Սփիւռքի համադրուած ներուժը, կարելոր հանգրուան մը կազմելով մեր ազգի պատմութեան մէջ:

Մեր Միութեան համար 2015 տարին յատկանշուեցաւ բոլոր մարզերու մէջ ծաւալող գործունեութեամբ եւ կարելոր իրագործումներով՝ նոր սերունդի տարբեր շրջանակներու շաղկապումին եւ անոնց միջոցաւ Հայաստան-Սփիւռք կապերու սերտացումին եւ գործակցական ու փոխադարձ օգնութեան նախաձեռնութիւններու աշխուժացման ուղղութիւններով:

Այս առթիւ շերմօրէն կ'ողջունեմ Միութեան բարերարները, բարեկամները եւ գործակից կազմակերպութիւններն ու կառոյցները, ինչպէս նաեւ մեր անդամակցութիւնը, շրջանակները, մասնաճիւղերը եւ անոնց յանձնախումբերու գործօն եւ նուիրեալ անդամները, կրթական ցանցէն ներս գործող մեր ուսուցչակազմերը, աշակերտութիւնը եւ ծնողները, յայտնելով խոր գնահատանքս եւ շնորհակալութիւններս իրենց հետեւողական հաւատաւոր աշխատանքին եւ արդիւնաւոր գործունեութեան համար:

Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւնը, նոր տարուան սեմին, անխախտ կը կենայ մեր ժողովուրդի եւ Հայրենիքի կողքին, պատրաստ դիմագրաւելու մեր դիմաց ցցուող նոր եւ շարունակուող բազմապիսի մարտահրաւերները:

Հետեւաբար, մեր միութեան 110-րդ տարեդարձի սեմին, կոչ կ'ուղղեմ մեր անդամակցութեան, խորապէս ընկալելու նոր ժամանակներու ոգին եւ նորոգուած եռանդով մեր համադրեալ ուժերը եւ կարելիութիւնները ի գործ դնելու, ի խնդիր Հայ Ընդհանուր Միութեան հիմնական նպատակներու իրագործումին, որպէսզի մեր երիտասարդ սերունդները հպարտութեամբ փարին իրենց ինքնութեան եւ խանդավառութեամբ շարունակեն մասնակից դառնալ մեր ազգանուր եւ հայրենակերտ աշխատանքին:

Այս ոգիով կ'ողջունեմ ձեզ եւ կը փոխանցեմ խաղաղ, ուրախութեամբ լի առողջ եւ արդիւնաւոր Նոր Տարուան մը սրտագին բարեմաղթութիւններս բոլորիդ:

Պերճ Սեղրակեան



ՀԱՂՈՐԳ-ԱԳՐՈՒԹԻՒՆ ՍՈՒՐԲ ԾՆՆԴԵԱՆ ԵՒ ԱՍՏՈՒԱԾԱՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ ՏՕՆԸ ԳԱՀԻՐԷԻ ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱԲՈՐԻՉ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԷՋ



Քրիստոսի Սուրբ Ծննդեան եւ Աստուածայայտնութեան տօնը Եգիպտոսի մէջ այս տարի եւս մեծ շուքով տօնուեցաւ:

Երկուշաբթի, 5 Յունուար 2016-ին, Երեկոյեան ժամը 6-ին, Գահիրէի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ մէջ մատուցուեցաւ ճրագալոյցի Ս. Պատարագը: Պատարագիչն էր Գահիրէի Հոգեւոր Հովիւ Արժ. Տ. Յակոբ Բիւյ. Յակոբեան:

Յաջորդ օր՝ Երեքշաբթի, 6 Յունուար 2016-ի առաւօտեան Ս. Պատարագը մատուցեց Թեմակալ Առաջնորդ Գերաշնորհ Տ. Աշոտ Եպիսկոպոս Մնացականեան:

Ս. Պատարագի արարողութիւնը, ըստ աւանդութեան, ուղիղ հեռարձակմամբ սփռուեցաւ ձայնասփիւռով, ինչպէս նաեւ հեռատեսիլի Ղպտի Ուղղափառ Եկեղեցւոյ Մար Սօրքոս Եգիպտական կրօնական կայանով: Երգեցողութիւնը կատարեցին «Շնորհալի» եւ «Արաքս» երգչախումբերը՝ ղեկավարութեամբ խմբավար Միհրան Ղազելեանի:

Ս. Պատարագին ներկայ էին Գահիրէի Թեմական եւ Զաղաքական Ժողովներու ատենապետները եւ Ազգային Իշխանութեան անդամներ, որոնց ուղեկցութեամբ եկեղեցի ժամանեցին Եգիպտոսի Նախագահ Ապտ Էլ Ֆաթթահ Էլ-Սիսիի ներկայացուցիչ՝ Սոհամմետ Եեհիա, Եգիպտոսի վարչապետ Շերիֆ Իսմայիլի ներկայացու-

ցիչ՝ Գահիրէի Նահանգապետ Տոքթ. Կալալ Մուսթաֆա Սայիտ, Եգիպտոսի Ներքին Գործոց Նախարարի ներկայացուցիչ՝ Չօրահրամանատար Թարեք Կամիլ: Գահիրէի փոխնահանգապետ Տոքթ. Ճիհան Ապտէլ Րահման, Ներքին Գործոց Նախարարի վարչական եւ կրօնական հարցերու օգնական՝ Չօրահրամանատար Սէյյիտ Մահերի ներկայացուցիչ՝ Չօրահրամանատար Սամիր Ապտ Էլ Մէկիտ: Եգիպտոսի Սուֆթի Տոքթ. Շաուքի Ալլամի ներկայացուցիչ՝ Տիար Ահմետ Սամէ, Վազըֆներու Նախարար Տոքթ. Մուխթար Կոմաայի ներկայացուցիչ Տիար Մուխլէս Էլ Խաթիպ եւ Նախարարի գրասենեակէն Շէյխ Ռէֆաաթ Կապեր Ալի, Ներքին Գործոց Նախարարի Ազգային Ապահովութեան օգնական՝ Մահմուտ Շաարաուիի ներկայացուցիչ՝ Գնդապետ Շաապան Խալիֆա, Ուայլի թաղի պետ Չօրահրամանատար Էսամ Սոհամմետ Զամալ:

Ներկայ էր նաեւ Եգիպտոսի մօտ ՀՀ Արտակարգ եւ Լիազօր դեսպան Տոքթ. Արմէն Մելքոնեանի ներկայացուցիչ, դեսպանատան առաջին քարտուղար Տիար Վարդգէս Յովսէփեան:

Արարողութեան ներկայ էին նաեւ Ղպտի Եկեղեցւոյ Պատրիարք Թաուատրոս Բ.-ի ներկայացուցիչներ, Միջին Արեւելքի Եկեղեցիներու Պատուոյ ընդհանուր քարտու-



ՀԲԸՄ

Մամլոյ Հաղորդագրութիւն

ՀԲԸՄ-Ը ԻՐ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՔԵԼՈՒԹԵԱՆ ԾԻՐԻ ԸՆԴԱՐՁԱԿՄԱՆ ԵՒ ԳՈՐԾԵԼԱՌՃԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՂՂՈՒԹԵԱՄԲ ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ՆՈՐ ԵՒ ՀԱՄԱՐՁԱԿ ԲԱՅԼԵՐՈՒ ԿԸ ՁԵՌՆԱՐԿԷ

Անցնող Հարիւր Տարիներուն Միութիւնը Սատար Հանդիսացած Ըլլալով Հայ Ժողովուրդի Ցեղասպանութենէն Վերապրումի Եւ Վերականգնումի Ծիգին, Այժմ Իր Հայեացքը Կը Սեւեռէ Գոյապահպանումէն Անդին՝ Յառաջընթացի Եւ Բարգաւաճման Ուղղութիւններով

Երկու տարիներու վրայ երկարող սերտողութեան, քննարկումներու, վերլուծումի եւ պատրաստութեան երկար աշխատանքներէ ետք, քաջալերուած Ցեղասպանութեան Հարիւրամեակի միջոցառումներուն առիթով աշխարհի տարածքին հայերու ցուցաբերած ուժեղ զօրակցութենէն, Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւնը այսու հանրութեան կը ներկայանայ, մեկնարկելու համար իր ազգային առաքելութեան վերամշակուած եւ ընդարձակուած ծիրը ներկայացնող յանդուգն ծրագիրը:

Իր հիմնադրութենէն ասդին, հարիւր տարիներ շարունակ համաշխարհային այս բարեսիրական հայկական մեծագոյն կազմակերպութիւնը, պաշտպանած եւ պահպանած է հայ ինքնութիւնը եւ ժառանգութիւնը Սփիւռքի տարածքին, տիրական ներկայութիւն մը ըլլալով անելի քան 30 երկիրներու մէջ: 1991-ին Հայաստանի անկախութենէն ետք, Հ.Բ.Ը.Մ.ը իր առաքելութիւնը ընդարձակեց հայրենիքի մէջ բարեսիրական եւ մշակութային ու կրթական հիմնարար ծրագիրներով:

Հ.Բ.Ը.Մ.ի այս նոր նախաձեռնութիւնը, որ կը նպատակադրէ բռնութեամբ կոտորակուած ու Սփիւռքի տարածքին տարտղնուած հայ ազգի վերակազմումը, նոր դարաշրջան մը կը սկսի աշխարհի տարածքին հայութեան կազմակերպումին ուղղութեամբ:

Հ.Բ.Ը.Մ.իւնը այս ծանրակշիռ պատասխանատուութիւնը կը ստանձնէ, հիմնուած Հայաստանի եւ Սփիւռքի մէջ իր իրականացուցած յաջող նախաձեռնութիւններու փորձառութեան վրայ:

2015-ը նշանաւորուեցաւ Օսմանեան Կայսրութեան կողմէ հայ ժողովուրդին դէմ գործադրուած Ցեղասպանութեան հարիւրամեակով: Ամբողջ տարուան ընթացքին աշխարհի տարածքին իրականացուած լայնածաւալ ձեռնարկներով, հայ ժողովուրդը հպարտօրէն եւ արժանապատուութեամբ, շահած ըլլալով աշխարհի համակրանքը եւ զօրակցական բարի տրամադրութիւնները, իր ետին կը թողու ցաւագին հարիւրամեակը:

Հարիւր տարուան վերապրումի, գոյապահպանումի, վերականգնումի եւ բարգաւաճումի ի խնդիր՝ ոգի ի բռին պայքարէ ետք, որուն ընթացքին բազմաթիւ կազմակերպութիւններու հերոսական աջակցութիւնը ունեցաւ ան, հայ ժողովուրդը կը գտնուի պատմական անկիւնադարձի մը առջեւ: Որպէս վերականգնած հաւաքականութիւն, դար մը շարունակ իրականացուցած իր ձեռքբերումներուն գիտակից՝ հայութիւնը յանձնառութեամբ կը փարի Հարիւրամեակի նշանաբանին՝ «Կը Յիշեմ Եւ Կը Պահանջեմ»: Միաժամանակ ան կը դիմագրաւէ ազգովին իրապէս կենսունակ եւ բարգաւաճ ըլլալու մարտահրաւերը: Մարտահրաւեր՝ որ կ'ընդգրկէ նաեւ սրբադասուած մարտիրոսներու յիշատակին եւ վերապրողներուն ընձեռնուած ազնիւ աջակցութիւններուն արժանի երախտաւորները ըլլալու պատասխանատուութիւնը:

Որպէս հիմք ունենալով իր ազգային փայլուն գործունեութիւնը, Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւնը ինքնավստահութեամբ առաջ կ'ընթանայ 21-րդ դարու յատուկ



մարտահրավերներուն դեմ, որպէսզի ապահովէ հայ ազգին համար կայուն ապագայի մը հիմերը, որոնց կորիզը կը կազմէ Հայաստանը:

Այս վիթխարի նպատակի իրագործումին համար Հ.Բ.Ը.Մ.ը պիտի իրականացնէ ծրագրային հետեւեալ քայլերը.

Վերաշխուժացնել հայկական Սփիւռքը՝ անոր մէջ հրահրելով հայ ազգը վերակազմելու ձգտումը:

Ընդարձակել Միութեան ազգային առաքելութեան ծիրը, իր ընկերային-մշակութային պատմական նպատակներուն առընթեր՝ ընդգրկելով հայրենիքի տնտեսական զարգացումը:

Արհեստավարժ տարրերով աւելի եւս զօրացնել իր կազմակերպչական կառոյցները եւ անոնց աշխատունակութիւնը:

Ծաւալել շեշտուած աշխատանք, ապահովելու համար նիւթական խոշոր ներդրումներ եւ հիմնադրամներ, ինչպէս նաեւ համագործակցութիւն նոյն ձգտումներով գործող կազմակերպութիւններու հետ՝ Միութեան միջոցները եւ կարելիութիւնները զօրացնելու եւ ընդարձակելու նպատակով:

Ընդարձակել եւ վերաշխուժացնել աշխարհատարած մեր գործօն կամաւորներու եւ համակիրներու ցանցերը:

Ներուժի համադրեալ ուժեղացում ապահովել այլ կազմակերպութիւններու հետ ընկերակցութեամբ՝ արագ եւ ծաւալուն ձեռքբերումներ իրականացնելու համար:

Իր այս նոր կողմնորոշումով, Հ.Բ.Ը.Մ.ը կը վերականգնէ 20-րդ դարու սեմին իր հիմնադիրներու սկզբնական ռազմավարութիւնը եւ տեսլականը, որ պարտադրաբար փոփոխութեան ենթարկուած էր Տեղասպանութեան պատճառով:

Այս նախաձեռնութեան ուղղութեամբ իբր առաջին քայլ, Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւնը հպարտութեամբ կը յայտարարէ, թէ Ռուբէն Վարդանեան ընտրուած է Կեդրոնական Վարչական Ժողովի անդամ:

Ռուբէն Վարդանեան Հայաստան ծնած յաջող գործարար մըն է, որ համաշխարհային համբաւ կը վայելէ որպէս Ռուսիոյ տնտեսական մարզի եւ զարգացող շուկաներու փորձագետ ու միջազգային բարերար: Գործարարական իր գլխաւոր իրագործումներէն է հռչակաւոր Troika Dialog ներդրումային դրամատունը, զոր ինք կերտած էր 1991-էն 2012 տարիներուն, ապա զայն ծախելով Ռուսիոյ մեծագոյն դրամատան՝ Sberbank-ին: 2001-ին Ռուբէն Վարդանեան համահիմնադիրներէն էր «Հայաստան 2020» զարգացման հեռանկարային տեսլականի մշակման ծրագրին, ընկերակցութեամբ Հ.Բ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչական Ժողովի անդամ Դոկտ. Նուպար ԱՖԷՅԵԱՆԻ: Աւելի ետք, իրականացաւ «Հայաստանի Ազգային Մրցունակութեան Հիմնարկ»ը 2007-ին, որ անհատական-հանրային համատեղ ընկերակցութիւն մըն է: Ի վերջոյ՝ նաեւ IDeA Initiatives for Development of Armenia - «Հայաստանի Զարգացման Նախաձեռնութիւններու Հիմնարկ»ը: 2013-ին հիմնուած այս հզօր կազմակերպութիւնը 300 արհեստավարժներ ընդգրկող պաշտօնեութեամբ, կը գործէ Հայաստանէն դուրս եւ ընկերային տնտեսական ծաւալուն ծրագիրներ կը յայտնաբերէ, կը ծրագրէ ու կը գործադրէ Հայաստանի մէջ: Անցնող տարիներուն, հիմնարկը աւելի քան 300 Միլիոն ամերիկեան տոլարի ներդրում կատարած է, իրականացնելով շարք մը ակնառու ծրագիրներ, ինչպէս «Տաթևի Վերածնունդ» ծրագիրը, Դիլիճանի UWC-ի (United World Colleges) անդամ «Միջազգային Գոլէճ»ը եւ «Դիլիճանի քաղաքային վերանորոգման ծրագիր»ը:

2015-ին, համահիմնադիրներ Դոկտ. Վարդան Գրիգորեանի (Carnegie Foundation) եւ Դոկտ. ԱՖԷՅԵԱՆԻ ընկերակցութեամբ, Պրն. Վարդանեան մեկնարկեց 100 LIVES Հարիւր Կեանքեր ծրագիրը, միաժամանակ հիմնելով նաեւ համաշխարհային մարդասիրական մրցանակը՝ Aurora Prize for Awakening Humanity: Այս մրցանակը, որուն տուչութիւնը առաջին անգամ պիտի կատարուի Երեւանի մէջ 2016-ի Ապրիլին, 1 միլիոն ամերիկեան տոլար պիտի նուիրէ աշխարհաքաղաքացիներու եւ կազմակերպութիւններու, որոնք իրենց կեանքերը վտանգելով կը փրկեն ուրիշներ, որոնք դժբախտութեան մատնուած են: Այս մրցանակը հիմնուած էր 2015-ին, որպէս Հայկական Տեղասպանութենէն վերապրածներու կողմէ երախտագիտական արտայայտութիւն բոլոր անոնց, որոնք հայ կեանքեր փրկած էին: Մրցանակը կը միտի նաեւ աշխարհի ուշադրութիւնը կեդրոնացնել ներկայիս տիրող մարդկային անարդարութեան երեւոյթնե-



րու վրայ եւ ճանաչումի արժանացնել արդի մարդասիրական քաջարի արարքներ:

Այս առթիւ, Հ.Բ.Ը.Մ.ի Նախագահ Պերճ Սեդրակեան իր խանդավառութիւնը արտայայտեց ըսելով. «Ես մեծ հաճոյքով եւ հպարտութեամբ կ'ողջունեմ Ռուբէն Վարդանեանը՝ որպէս Կեդրոնական Վարչական Ժողովի անդամ: Ուրախ եմ որ մեր Նախաձեռնութիւններուն ի նպաստ յատկանշական քայլ մը կը հանդիսանայ ասիկա: Աւելի քան 20 տարիներ ճանչցած ըլլալով Պրն. Վարդանեանը, զինք կը նկատեմ յաջողած Հայու տիպարը՝ իր բազմաթիւ իրագործումներով, անհատական արժանիքներով եւ անխախտ ուղղամտութեամբ: Իր գործով ան կը մարմնաւորէ հայ ազգի ապագային նկատմամբ տեսիլքի, նպատակասէւեռ կիրքի եւ նուիրումի համադրութիւն մը: Որպէս արդի գործարար եւ բարերար, Ռուբէն Վարդանեան կը դրսեւորէ խանդավառող ներուժ եւ նորարար փայլուն յղացքներ IDeA-ի միջոցով, որուն գործակից է նաեւ Հ.Բ.Ը.Մ.ը: Ի Կերջոյ, որպէս Ռուսաստանի քաղաքացի, ան կենսական կապ մը կը հանդիսանայ մեզի համար, Ռուսիոյ եւ Արեւելեան Եւրոպայի մեր կարեւոր համայնքներուն հետ: Համոզուած ենք, որ ան կարեւոր դեր պիտի կատարէ մեր ազգային առաքելութեան նոր տեսլականի իրագործումին ուղղութեամբ: Ուրախութեամբ կ'ողջունենք իր մասնակցութիւնը»:

Այս առթիւ յայտարարուեցաւ նաեւ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան եւ IDeA-ի միջեւ սերտ գործակցութիւն մշակելու տրամադրութիւնը՝ Հայաստանի մէջ իրագործուող ծրագիրներու ուղղութեամբ: Առ այդ, Պերճ Սեդրակեան եւ Վազգէն Եագուպեան IDeA-ի հոգաբարձական կազմի անդամ ընտրուեցան, միանալով նոյն մարմնին մաս կազմող Միութեան Կեդրոնական Վարչական Կազմի անդամներէն Նուպար Աֆէյեանին:

Իր կարգին, IDeA-ի հիմնադիր Ռուբէն Վարդանեան ըսաւ. «Ինծի համար պատիւ եւ առանձնաշնորհում կը նկատեմ Հ.Բ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչական Ժողովի անդամակցութիւնս: Այս կազմակերպութիւնը անցնող հարիւր տարիներուն, հայ ազգի գոյապահպանումին ամենայատկանշական մղիչներէն մին հանդիսացած է, հետեւողական եւ ազնիւ գործունեութեամբ, զորս ծաւալած է ան աշխարհի տարածքին իր բազմաթիւ համայնքներուն միջոցով: Հ.Բ.Ը.Մ.ը լաւագոյնս դիրքաւորուած է, ըլլալու համար հայրենիքի բարգաւաճման գլխաւոր լծակներէն մին, ինչպէս նաեւ ուղղութիւն տալու 21-րդ դարու հայ տիպարի կերտումին: Ես խորապէս յանձնառու եմ իմ ճիգերս, փորձագիտութիւնս, բարեսիրական կարելիութիւններս եւ կշիռս ի գործ դնելու ի նպաստ այս ազնիւ կազմակերպութեան աշխատանքին: Խանդավառ եմ նաեւ Հ.Բ.Ը.Մ.ի եւ IDeA-ի միջեւ զարգացող համագործակցութեամբ եւ մեր ծրագրային կողմնորոշումով, որ կը միտի հզօր ուժ յառաջացնել աշխարհի տարածքին հայ ժողովուրդի յառաջդիմութեան համար»:

Այս յայտարարութեան առիթով, Կեդրոնական Վարչական Ժողովի անդամ Նուպար Աֆէյեան յաւելեալ լուսաբանութիւններ կատարեց: Ան ըսաւ. «Երկու տարի առաջ անդամակցելով Հ.Բ.Ը.Մ.ի Միութեան Կեդրոնական Վարչական Ժողովին, հաճոյքը ունեցած եմ մօտէն աշխատակցելու Նախագահ Պերճ Սեդրակեանի եւ բազմաթիւ այլ անդամներու հետ, Հ.Բ.Ը.Մ.ի ապագայի ուղղուած տեսլականի ծիրը լայնցնելու ուղղութեամբ: Սերտօրէն գործակցած ենք նաեւ Ռուբէնին եւ IDeA հիմնարկին հետ, մշակելու համար այն ուղեգիծը, զոր պիտի իրականացնէ Հ.Բ.Ը.Մ.ի նոր գործընթացի ծրագիրը: Այդ միջոցին, մենք գործակցական արդիւնաւետ կապեր հաստատեցինք նաեւ ստեղծագործական ճարտարագիտութեան ԹՈՒՍՕ հիմնարար կեդրոններու հիմնադիր եւ Հ.Բ.Ը.Մ.ի Միութեան Վարչական Ժողովի անդամ Սեմ Սիմոնեանի հետ: Այժմ երբ իմ երկար տարիներու գործակից Ռուբէն Վարդանեան կը միանայ Հ.Բ.Ը.Մ.ի Վարչական Ժողովի կազմին, բոլորս խանդավառ ենք անցնելու կազմակերպչական փոխակերպումի մեր ծրագրի յաջորդ հանգրուանին: Խթանուած Հարիւրամեակի ընթացքին հայութեան ցուցաբերած զօրավիգով, մենք գիտակցութեամբ կը դիմագրաւենք մեր դիմաց եղող մարտահրաւերները եւ պատեհութիւնները»:

«Ասիկա ծաւալուն գործակցութիւններու եւ յառաջընթացի խանդավառ նոր հանգրուան մը կը հանդիսանայ Հ.Բ.Ը.Մ.ի Միութեան համար», հաստատեց Միութեան Փոխ-Նախագահ Սեմ Սիմոնեան: «Ես յատկապէս խանդավառ եմ ԹՈՒՍՕ կեդրոններու, Դիլիճանի Միջազգային Գոլէճի եւ Հայաստանի Ամերիկեան Համալսարանի ընձեռած կարելիութիւններով, որոնք նոր մղում կ'ապահովեն Հ.Բ.Ը.Մ.ի կրթական ծրագիրներուն»:



ԳՆԱՀԱՏԱՆ-ՔԻ ԵՒ ԵՐԱՄՏԱԳԻՏՈՒԹԵԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ ԳԱՀԻՐԷԻ ՀԱԸՄ-ԷՆ ՆԵՐՍ



ՀԱԸՄ-ի Եգիպտոսի Շրջանակային Ցանձնաժողովը եւ Գահիրեի ՀԱԸՄ-ը միասնաբար ընդունելութիւն մը կազմակերպած էին Չորեքշաբթի, 25 Նոյեմբեր 2015-ին, ժամը 8:30, Զելիոպոլսոյ Հայ Կաթողիկէ Ս. Թերեզայի հանդիսասրահին մէջ՝ ի պատիւ իրենց վարչութեանց պատուարժան անդամներէն երեքին, որոնք երկար տարիներ շարունակ հաւատարմօրէն ծառայած էին Միութեան: Ասիկա ՀԱԸՄ-ի համար ականջակա սովորոյթ մըն է, ՅԱՐԳԵԼ ԱՆՈՆՑ, ՈՐՈՆՔ ԿԸ ԾԱՌԱՅԵՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԵՒ Կ'ՕԺԱՆԴԱԿԵՆ ԱՆՈՐ ՆՊԱՏԱԿՆԵՐՈՒՆ:

Մեծարուած երեք անձնաւորութիւններն էին՝ Տիար Օսնիկ Կարիպեան, բարեյիշատակ ողբացեալ Նորայր Տեօվլեթեան եւ Տիար Միսաք Չէչճէնեան:

Տիար Օսնիկ Կարիպեան եղած է փոխատենապետ Եգիպտոսի Շրջանակային Ցանձնաժողովի: Ան վերջերս ՀԱԸՄ-ի Կեդրոնական Վարչութեան կողմէ արժանացած է ՀԱԸՄ-ի Պատուոյ Անդամի բարձր տիտղոսին, Միութեան մատուցած իր բազմաթիւ, օգտաշատ ծառայութիւններուն համար:

Ողբացեալ Նորայր Տեօվլեթեան եւ Տիար Միսաք Չէչճէնեան, երկուքն ալ երկար տարիներ շարունակ անդամ եղած են Գահիրեի ՀԱԸՄ-ի Վարչութեան եւ հաւատարմօրէն սատարած անոր գործունեութեան:

Երեկոն սկսաւ Գահիրեի ՀԱԸՄ-ի Վարչութեան ատենապետ՝ Տոքթ. Վիգէն Ճիգմեճեանի բարի գալուստի խօսքով: Ան

ներկաները հրաւիրեց մէկ վայրկեան յոտընկայս լռութեամբ յարգել ողբացեալ Նորայր Տեօվլեթեանի յիշատակը, որուն մահը տեղի ունեցած էր 15 Յունիս 2015-ին, ճիշդ երկու օր առաջ այն թուականէն՝ որ նախատեսուած էր պատուասիրութիւնը կատարել եւ որուն պատճառով ձեռնարկը յետաձգուած էր:

Ապա խօսք առաւ ՀԱԸՄ-ի Եգիպտոսի Շրջանակային Ցանձնաժողովի եւ Գահիրեի ՀԱԸՄ-ի Պատուոյ Ատենապետ՝ Տիար Պերճ Թերզեան: Ան նախ դրուատեց մեծարուած երեք անձնաւորութիւններէն առաջինը՝ Տիար Օսնիկ Կարիպեանը, շեշտելով անոր երկարամեայ նուիրեալ ծառայութիւնները: Ան բարձրօրէն գնահատեց Միութեան կալածական եւ օրինական հարցերուն լուծման համար անոր կատարած գովելի ներդրումները: Տիար Թերզեան մասնաւորապէս նշեց թէ մեծարեալը ինչ կարելորդեր կատարած էր Զելիոպոլսոյ ՀԱԸՄ ՆՈՒՊԱՐԻ հողին պետական արձանագրութիւնը յաջողցնելու համար, ճանիկ Զագըրի առանձնատան հողային տարածքին բաժանման առիթով եւ վերջապէս, իր աւարտին հասցնելով Եգիպտոսի կառավարութեան եւ ՀԱԸՄ-ի հետ կապ ունեցող թղթածրարներու դժուարին հարցը: Տիար Թերզեան ծանրացաւ նաեւ Տիար Կարիպեանի ունեցած հայրենասիրական բարձր ոգիին վրայ, յայտնելով թէ ան նիւթական մեծ օժանդակութիւններ մատուցած է հայրենիքին, անոր դժնդակ օրերուն, ինչպէս

1988-ի ահաւոր երկրաշարժին:

Տիար Պերճ Թերզեանի դրուատական խօսքերէն ետք, ԶԲԸՄ-ի Եգիպտոսի Շրջանակային Յանձնաժողովի ատենապետ՝ Տիար Օննիկ Պըլըքտանեան կարդաց ԶԲԸՄ-ի Կեդրոնական Յանձնաժողովի յայտարարագիրը, որով Տիար Օննիկ Կարիպեան կ'արժանանար ԶԲԸՄ-ի Պատուոյ Անդամի բարձր տիտղոսին եւ առ այդ պարգեւատրեց զայն:

Ապա Տիար Պերճ Թերզեան կրկին խօսք առնելով, ներկայացուց Ողբ. Նորայր Տեօվլէթեանի 43 տարիներու նուիրեալ աշխատանքը: Ան 1972-էն մինչեւ իր մահը՝ 2015, հաւատարիմ անդամ եղած է Գահիրէի ԶԲԸՄ-ի Վարչութեան, որպէս՝ ատենադպիր, փոխ ատենապետ եւ ատենապետ: Իր խօսքին մէջ ան շեշտեց թէ ինչ օգտաշատ գործունէութիւններ ունեցած է ան եւ նպաստած՝ ԶԲԸՄ-ին եւ այլ հայկական կազմակերպութիւններու եւ Միութիւններու: Յանուն Տեօվլէթեան ընտանիքին, ողբացելին դուստրը՝ Տիկին Կասիա Տեօվլէթեան-ճղալեան, Գահիրէի ԶԲԸՄ-ի ատենապետ՝

Տոքթ. Վիգէն Ճիգմէճեանէ ստացաւ յիշատակի արծաթեայ պնակ մը:

Զերթը եկած էր Տիար Միսաք Չէչճէնեանի: Ան 1989-էն ի վեր անդամ եղած է ԶԲԸՄ-ի Վարչութեան, նախ որպէս անդամ, ապա՝ ատենադպիր, փոխ-ատենապետ եւ ի վերջոյ, 1992-էն մինչեւ 2009 որպէս գանձապահ, որուն ընթացքին ամենայն ուղղամրտութեամբ, պարկեշտութեամբ եւ յստակութեամբ վարած է Գահիրէի ԶԲԸՄ-ի ելեւմտական գործերը: Ապա Տիար Պերճ Թերզեան հրաւիրեց Տիար Միսաք Չէչճէնեանը որ Գահիրէի ԶԲԸՄ-ի Վարչութեան ատենապետին ձեռքէն ստանայ իր յուշանուէրը:

Հանդիսութեան աւարտին, փակման խօսքը կատարեց Եգիպտոսի Հայոց Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Աշոտ Եպս. Մնացականեան: Ան շնորհաւորեց պարգեւատրեալ անձնաւորութիւնները եւ յանձնարարեց ԶԲԸՄ-ի Վարչութեան պահպանել իր նուիրեալ անդամները մեծարելու սովորութիւնը:

**ԶԲԸՄ-ի կայքէջէն քաղեց՝
Անայիս Ճիգմէճեան**





ԳԱՀԻՐԷԻ ՀՐԸՄ-Ը ԿԸ ՊԱՐԳԵՒԱՏՐԷ ԳԵՐԱԶԱՆՑԻԿ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ



Կիրակի, 6 Դեկտեմբեր 2015-ին, Գահիրեի ՀՐԸՄ-ը հանդիսաւոր երեկոյթ մը կազմակերպեց, մեծարելու համար 2014-2015 ուսումնական տարեշրջանի Գահիրեի հայ համայնքի փայլուն շրջանաւարտները, անոնց յանձնելով գերազանցութեան վկայագրեր, նուէրներ եւ սիրական պարգեւներ:

Սոյն հանդիսութիւնը տեղի ունեցաւ Հելիոպոլսոյ Պըլըքտանեան հանդիսասրահին մէջ, հոծ բազմութեան մը ներկայութեան, հովանաւորութեամբ Եգիպտոսի Հայոց Թեմի Առաջնորդ՝ Գերշ. Տ. Աշոտ Եպս. Մնացականեանի: Ներկայ էին նաեւ Գահիրեի Թեմական եւ Զաղաքական Ժողովներու ատենապետները, Եգիպտոսի ՀՐԸՄ-ի Շրջանակային Յանձնաժողովի եւ Գահիրեի ՀՐԸՄ-ի ատենապետները, անդամներ, պարգեւատրուող ուսանողներու ծնողներ, բարեկամներ եւ յատկապէս ՀՐԸՄ-ի Կեդրոնական Վարչական Ժողովի անդամներ՝ Տեառք Վազգէն Եագուպեան եւ Երուանդ Չօրեան, ինչպէս նաեւ Եւրոպայի ՀՐԸՄ-ի Վարչութեան անդամուհի՝ Տիկին Աստղիկ Ալեքսանեան:

Երեկոյթը սկսաւ Գահիրեի ՀՐԸՄ-ի Վարչութեան ատենապետ՝ Տոքթ. Վիգէն Ծիգմեճեանի բացման խօսքով: Ան բարի գալուստ մաղթեց ներկաներուն, ինչպէս նաեւ շնորհաւորեց ներկայ փայլուն ուսանողները եւ իրենց ծնողները՝ անոնց ձեռք բերած պատուաբեր արդիւնքներուն համար:

Ապա, ներկայացուց ՀՐԸՄ-ի Հայկական Համացանցային Համալսարանի (ՀՀՀ) հիմնադիր եւ նախագահ՝ Դոկտ. Երուանդ Չօրեանը, որ հիւրաբար քաղաքս կը գտնուէր եւ պատուոյ հիւրն էր օրուան հանդիսութեան:

Տոքթ. Երուանդ Չօրեան շատ առիթնող գեկուցում մը ըրաւ «Դաստիարակութիւն եւ Նորոյթներ» նիւթին շուրջ եւ մատնանշեց համացանցին եւ «Multimedia»-ին դերը, որպէս արդիական միջոց համայն աշխարհի մէջ ցրուած հայերը միացնելու, դաստիարակելու եւ պահպանելու հայկական ինքնութիւնը: Ան խօսեցաւ նաեւ ՀՀՀ-ի ընձեռած զանազան նախագծերու մասին, որոնցմով կարելի է, առցանց դասարաններու եւ ելեկտրոնային գիրքերու միջոցով հայերէն լեզու, հայոց պատմութիւն եւ մշակոյթ ուսուցանել:

Դոկտ. Երուանդ Չօրեան, որ նաեւ ատենապետն է ՀՐԸՄ-ի «Silicon Valley»-ի Մասնաճիւղին եւ անդամ ՀՐԸՄ-ի Կեդրոնական Վարչութեան, սոյն հաւաքոյթին առիթէն օգտուելով, դրուատեց Տիկին Աննա Տոլապճեան-Թրայեանը, որ հաղորդակցութեան կապն է Գահիրեի ՀՐԸՄ-ին եւ ՀՀՀ-ին միջեւ, անոր շնորհելով «ՀՀՀ-ի Դեսպան» հմայիչ կոչումը, իր կատարած այն դերին համար որ ՀՀՀ-ի առցանց ուսման ծրագրերու ընդմէջէն, հայկական ինքնութեան մասին, լեզուի, պատմութեան, մշակոյթի եւ ճատրակի գիտելիքներ կը փո-

խանցե նորահաս սերունդին:

Պետք է նշել նաեւ թէ Տիկին Թրայեան՝ Գահիրէի ԶԲԸՄ-ի եւ ԶՀՀ-ի միջեւ որպէս հաղորդակցութեան կցորդ նշանակուելէն ի վեր, շուրջ երեք տարի առաջ, սոյն դասընթացքներուն մասնակցող եգիպտահայ երիտասարդներուն թիւը զգալիօրէն աւելցած է: Դարձեալ, շնորհիւ իր խանդավառութեան եւ եռանդին, ան կարողացաւ տասը շրջանաւարտներու հետ կազմել ԶՀՀ-ի առաջին առցանց ճատրակի խմբական դասընթացքներ, ինչպէս նաեւ ճատրակի ակումբ մը՝ Գահիրէի ԶԲԸՄ-ի Կեդրոնին մէջ, ուր մասնակիցները շաբաթը անգամ մը կը հաւաքուին եւ կ'ըմբռնեն իրենց նախասիրած մտային խաղը:

Հանդիսութեան առաջին բաժնի աւարտէն վերջ, սկսաւ փայլուն շրջանաւարտներու



րու պարգեւատրման արարողութիւնը: Մրցանակները, որոնք կը բաշխուին 2001 թուականէն ի վեր, շնորհիւ Գահիրէի ԶԲԸՄ-ի Սաթենիկ Զազըր Հիմնադրամին, գնահատանքի եւ քաջալերանքի արտայայտութիւն մըն են՝ հանդէպ համայնքիս այն ուսանողներուն, որոնք փայլուն յաջողութեամբ աւարտած են իրենց կրթական շրջանը:

Այս տարի մրցանակի արժանացած են 17 շրջանաւարտներ հետեւեալ արդիւնքներով.

Տասը՝ Նախակրթարանէն.

Կլորիա Մկրտիչեան՝	98.76%
Լարա Զամբերթեան՝	98.46%,
Կարօ Սարգիսեան՝	98.15%,
Լոռի Զիլինկիրեան՝	97.63%,
Գարին Տրդատեան՝	97.19%,

Արեգ Սիմոնեան՝	96.95%,
Բիւռ Զերտելեան՝	96.56%,
Ռիթա Գեորգեան՝	95.3%,
Ալէն Բարմաքեան՝	94.39%
Արին Սիմոնեան՝	95%

Երեք՝ Պատրաստականէն.

Վարդուհի Գրիգորեան՝	94.66%,
Բերլա Աւանեան՝	91.91%
Մեսրոպ Ղազէլեան՝	91.80%:

Երեք՝ Երկրորդականէն.

Սեւակ Սագայեան՝	98.50%,
Փայլակ Թորոսեան՝	93.50%
Կարին Կրպոյեան՝	92%:

Այս տարի միայն **մէկ ուսանող**՝ Րակի Սարգիս, **համալսարանաւարտ** եղած է «Շատ Լաւ» յիշատակութեամբ:

Պարգէւները ուսանողներուն յանձնընեցան Գահիրէի ԶԲԸՄ-ի Վարչութեան



անդամներուն կողմէ: Վկայագիրներու եւ գիրքերու առընթեր, փայլուն նիշերով շրջանաւարտները ստացան նաեւ նիւթական պարգէւներ, որոնք կը համապատասխանեն իրենց ստացած վկայականին:

Այսպէս, Նախակրթարանի բաժնէն շրջանաւարտը ստացաւ 200 Ե.Ո.: Պարտաստականի բաժնէն շրջանաւարտը՝ 400 Ե.Ո., իսկ երկրորդականինը՝ 1000 Ե.Ո.: Սոյն նիւթական պարգէւները կը ստանան միայն անոնք՝ որոնք միջինը նուազագոյնը 90% է:

«Շատ Լաւ» յիշատակութեամբ համալսարանաւարտը ստացաւ 1500 Ե.Ո.:

Կը շնորհաւորենք բոլոր շրջանաւարտները եւ անոնց կը մաղթենք նորանոր յաջողութիւններ:

**ԶԲԸՄ-ի կայքէջէն քաղեց՝
Անայիս Ճիգմեճեան**



ԱՆԴՐԱՆԻԿԸ «ԾԻԱԾԱՆ»ՈՎ

Արուեստները, մանաւանդ կատարողական արուեստները, մեզի կը հասնին երկու ճամբաներով.

Արհեստավարժ կատարողներով, որոնք կամուրջ կը դառնան ստեղծագործ անհատին երկը հանրութեան հասցնելու համար, եւ իրենց անթերի կատարումով Աստուածայինին գոյութիւնը անգամ մը եւս կը հաստատեն մարդոց հոգիներուն մէջ:

Եւ կամ մեզի կը հասնին փոքրերու թոթովանքներուն քաղցրութեամբ, անմեղ վրեպներով եւ լաւ գործ մը կատարած ըլլալու իրենց մեծ եռանդով:

Մեր, հայերուն պարագային, արուեստները հոգին ազնուացնելու եւ ճաշակը յղկելու կողքին, թերեւս շատ անելի կարելոր եւ հիմնական այլ դեր մը եւս ունին, քան առաջին երկուքը՝ ոգի ջամբել Սփիւռքի մեր անհող տարածքներուն վրայ ուռճացող, հասակ նետող սերունդներուն:

Եւ ճիշդ այդ ոգին էր, որ կը թեւածեր Պըլքտանեան սրահի կամարներուն տակ, Կիրակի, 2015 թուականի Դեկտեմբեր 20-ի երեկոյեան, «Ծիածան» մանկական երգչախումբի հնչիւններով եւ կազմակերպութեամբ Գահիրէի ԶԲԸՄիութեան:

7-12 տարեկան 25 մանուկներ, իրենց ժպտուն դէմքերով եւ քաղցր թոթովանքով, ոգեկոչեցին ազգային, սիրուած եւ այնքան երգուած հերոս Անդրանիկ Օզանեանի ծննդեան 150 ամեակը:

Նոյն այդ ոգին էր, որ երգերուն եւ մէջ ընդ մէջ ասմունքունող տողերուն հետ բեմէն հասաւ ներկաներուն, յիշեցուց իրենց մանկութեան օրերէն իսկ հարազատ դարձած երգերը եւ խանդավառեց զիրենք հերոսով մը, որուն մասին այսօրուան տա-



րեցները յաճախ լսած եւ իրենց ծնողներէն:

Ներկաներէն շատեր կը մասնակցէին երգերուն, մանաւանդ կրկներգերուն, կամ կը հետեւէին անոնց բառերուն՝ յայտագիր-գրքոյկին էջերէն:

Ելոյթի դադարին ներկայացուեցաւ բաւական ամբողջական արխիւային տեսերիզ մը, որ կը ներկայացնէր Անդրանիկի հակիրճ կենսագրութիւնը, կը նկարագրէր մարտերը, որոնց մասնակցած էր կամ առաջնորդած, իր արտասանած խօսքերն ու իր մասին մեր

մեծերուն ըսած կամ գրած դրուատանքները:

Այս առիթով մեծ խնամքով պատրաստուած էր յայտագիր-գրքոյկ մը (երկու պրակ), զոր կարելի է նկատել որպէս ամփոփ տեղեկութիւններու փոքրիկ շտեմարան մը, Անդրանիկի կեանքն ու գործը եւ հերոսին նուիրուած երգերուն բառերը խտացնող:

Մեր պատմութեան չորս գագաթները կազմող անուններուն մասին Շահան Շահնուրի գրութեան մէկ հատուածը, որմով կը բացուի այս գրքոյկ-յայտագիրը, ձեւով մը իր արժանի տեղը կու տայ Անդրանիկին, զայն դարձնելով հայու մարտունակու-





թեան խորհրդանիշը, ինչպես Կոմիտաս Վարդապետն է հայ երգին խորհրդանիշը, կաթողիկեն՝ հայ ճարտարապետութեան, իսկ Մեսրոպ Մաշտոցը՝ ոչ միայն հայ գիր ու գրականութեան, բայց մանաւանդ հայ ոգիին խորհրդանիշը: Եւ այս չորս անունները կը դառնան քառագագաթ Արագածը մեր պատմութեան, ոգիին եւ արուեստին հանդէպ մեր ունեցած պաշտամունքին:

Յերոսի կենսագրութեան կը յաջորդեն բաւական երկար հատուածներ Անդրանիկի խօսքերէն, որոնցմէ մէկ քանին, իրենց շահեկանութեան համար, կը յիշենք այստեղ.

«... Ես իմ արձանս չեմ ուզեր, փառաւոր թաղում չեմ ուզեր: Թող հայ ժողովուրդը կանգնեցնէ աւեր դարձած Առաքելոց վանքը եւ այնտեղ հիմնէ փոքր ուսումնարան մը հայ մանուկներուն համար»:

«Մարմինս օտար հողի վրայ չթողուք: Անպայման Յայաստան փոխադրէք: Եթէ զիս հայրենիք չընդունին՝ ձեռքիս ցուցամատը կտրել կու տաս եւ հոն կը դրկես, տեղ մը թող թաղեն: Այս մատս շատ աշխատած է հայրենիքին համար»:

«Այժմ բազմաչարչար եւ հալածուած ժողովուրդը ունի իր հայրենիքը. պետք է ուժ տալ Յայաստանի ձեռնարկներուն եւ զօրացնել այն իբրեւ մեր ապագայ յոյսերուն խարիսխ»:

«Թշնամին թողուլ եւ ներքին մանր-մուր խնդիրներով զբաղուիլ՝ ոճիր է, հայրենիքի մահն է»:

Բաւական հետաքրքրական են մեր պատմութեան մեծ անուններուն կարծիքները Անդրանիկի մասին. գրեթէ բոլորն ալ տարբեր բառերով նոյն գաղափարը կ'արտայայտեն, թէ «Անդրանիկը հայ ժողովուրդին համար անհատ չէ, այլ մարմնացումն է մի հզօր ու անսասան գաղափարի» (Աւետիս Ահարոնեան), «Ես այսօր կը խոստովանիմ թէ Անդրանիկ միակ մարդն էր, որ չխաբուեցաւ թուրքերէն եւ չշլացաւ պաշտօններէ» (Արմէն Գարօ):

Գրքոյկ-յայտագրին վերջին երկու էջերը նուիրուած են Անդրանիկի Եգիպտոս կատարած այցելութեան, որուն համար ինքը սած է.

«Եգիպտոսի գաղութը ինծի նուիրած է

սուր մը. գեղեցիկ արուեստ մը կայ իր շինութեան մէջ: Կարճ ժամանակէն պիտի դրկեմ այդ կողմը որ ձեզի յանձնեն եւ դուք տանիք Յայաստան՝ յանձնելու թանգարան»:

Այս սուրը հերոսին յանձնուեր է Թորգոմ Եպս. Գուշակեանի ձեռամբ, հանդիսութեան մը ընթացքին: Անդրանիկ Չելեպեան իր «Զօրավար Անդրանիկ եւ Յայ Յեղափոխական Շարժումը» հատորին մէջ մանրամասն նկարագրած է այս սուրը.

«Անդրանիկի այս սուրը շինուած է հայկական պատմական սուրերու նմանութեամբ: Երկսայրի սուր է, հազիւ 70 սանթիմէթ երկարութեամբ, երկու երեսին խորքիւրով եւ ոսկեթել ընդելուզուած մակագրութեամբ ... Դաստապանը փղոսկրեայ է, մէկ երեսին 70 ադամանդեայ զարդեր շարած: Սուրը ներկայիս կը պահուի Երեւանի Թանգարանին մէջ»:

Այս բոլորը՝ ձեռնարկին գաղափարը, իրագործումը, գրքոյկին պատրաստութիւնն ու երգչախումբին ղեկավարութիւնը կը պարտինք Միհրան եւ Գոհար Ղազէլեան ամուլին, երաժշտագետ եւ մանկավարժ զոյգին, որոնց ներկայութիւնը Գահիրէի մէջ, աւելի քան տասնամեակէ մը ի վեր, բարերար ազդեցութիւն ունեցած է գաղութին գրեթէ բոլոր կառոյցներէն ներս՝ եկեղեցիէն, ուր Մայեսթրօն դպրապետ է եւ տիկինը՝ դպրուհի, Գալուստեան-Նուպարեան դպրոցէն ներս՝ որպէս երաժշտութեան դասատու եւ ղեկավար երգչախումբերուն (Նախակրթարան, պատրաստական-երկրորդական եւ «Արցախ»): Այս ներկայութիւնը ունեցած է նաեւ փայլուն եւ «շահաբեր» արդիւնք, երբ անցեալ տարեշրջանի աւարտին, դպրոցի «Արցախ» երգչախումբը նուաճած է առաջին մրցանակն ու յիսուն հազար եգիպտական ոսկիի պարգէնը, Uptown Cairo տաղանդի մրցումներուն:

Խորապէս գնահատելի է Ղազէլեան ամուլին անձնուեր աշխատանքը, որուն արդիւնքը կը վայելեն փոքրերը՝ փորձերէն մինչեւ բեմ ելլելը, իսկ ներկաներուն հոգին կը հրճուի՝ ի տես իրենց զաւակներու կատարումներուն:

Մարուշ Երամեան



ՀԱՐՄ-Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄ ԴՈԿՏՈՐ ԵՐՈՒԱՆԴ ԶՕՐԵԱՆ՝ ՍԻՆՈՓՍԻՍ ԱՐՄԵՆԻԱՅԻ ՆԱԽԱԳԱՀ ՆՇԱՆԱԿՈՒԱԾ

Սինոփսիս Ընկերությունը (առօրեայ կեանքին մեջ անհրաժեշտ էլեկտրոնային արտադրանք ու ծրագրային յաւելուածներ մշակող նորարարական ընկերություն) յայտնած է որ իրենց Ընկերութեան գլխաւոր ճարտարագետ եւ առաջատար հետազօտող, Տոքթ. Երուանդ Զօրեան, նշանակուած է Սինոփսիս Արմենիայի նախագահ:



Դոկտ. Զօրեան պիտի ստանձնէ Հայաստանի Սինոփսիսի մասնաճիւղի ղեկավարման պատասխանատուութիւնը՝ ի նպաստ էլեկտրոնային Նախագծման Ինքնագործունէութեան (ԵՆԻ) եւ մտաւոր սեփականութեան ոլորտէն ներս, Սինոփսիս Ընկերութեան առաջատարութիւնը պահպանելու ռազմավարութեան: Ծշգրիտ եւ բնական գիտութիւններու բնագաւառին մէջ ՀՀ Պետական Մրցանակի դափնեկիր, ՀՀ Գիտութիւններու Ազգային Ակադեմիայի արտասահմանեան անդամ եւ Հայաստանի մէջ աւելի քան 20 տարուայ փորձ ունեցող ԵՆԻ եւ մտաւոր սեփականութեան ոլորտի բազմավաստակ մասնագետ Տոքթ. Երուանդ

Զօրեան, լաւագոյնս պատրաստուած է՝ աջակցելու համար Հայաստանի արհեստագիտութեան զարգացումին ու արհեստագիական նորարարութեան խթանումին:

«Հայաստանը կը հիւրընկալէ Սինոփսիս Ընկերութեան ամենախոշոր գիտաարտադրական մասնաճիւղերէն մէկը՝ աւելի քան 700 աշխատակիցներով: Մեր խումբը, իր մասնագիտական տաղանդներուն եւ գերազանց իրագործման շնորհիւ, իր ներդրումը կ'ունենայ ամենաառաջատար կիսահաղորդչային գործընթացներու հիման վրայ ստեղծուող մտաւոր սեփականութեան եւ ԵՆԻ արտադրանքի մշակման մէջ», - կ'ըսէ Երուանդ Զօրեան: «Ես խանդավառուած եմ Հայաստանեան մեր խումբին հետ աշխատելու, եւ համատեղ աշխատանքի հետեւանքով, կիսահաղորդչային արդիւնաբերութեան ոլորտէն ներս Սինոփսիսի համաշխարհային յաճախորդներու յաջողութիւնն ապահովող լուծումներու ստեղծման հեռանկարով»:

շար. էջ 2 եւ →

ղար Տոքթ. Կիրկիս Սալէի եւ Ղաթի Օրթոտոքս Պատրիարքարանի ընդհանուր փոխանորդ աւագ քիւյ. (Գոմմոս) Սերկիոս Սերկիոս, Եգիպտոսի եւ Սուտանի Մարոնիթներու Առաջնորդ Ժորժ Շիհան Եպիսկոպոս, Ասորի Եկեղեցւոյ ներկայացուցիչ Քիրոլոս Վարդապետ Մասուտի, նաեւ Տահեր թաղի Միքայէլ Հրեշտակապետ Եկեղեցւոյ աւագ քիւյ. Սաուիրաս Մորքոս, Ղաթի աւագ քիւյ. Պուրթոս Ուիլիամ, Միւսա Նապիի եւ Լաթիֆ Ուսաֆի:

Ներկայ էր նաեւ վճռաբեկ ատեանի փաստաբան եւ միջազգային իրաւարարութեան խորհրդատու՝ Տիար Մորքոս Սաուիրաս:

Ս. Պատարագի ընթացքին պատարա-

գիչ Սրբազան Հայրը ընթերցեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի Ս. Ծննդեան պատգամը, իսկ Դոկտ. Ծորժ Սիմոնեան ընթերցեց Առաջնորդ Սրբազան Հօր խօսքը՝ արաբերէնով, որուն մէջ յատուկ շնորհակալութիւն յայտնուած էր հիւր ներկաներուն:

Յաւարտ Ս. Պատարագի տեղի ունեցաւ ջրօրհնէքի արարողութիւն, որուն կնքահայրն էր Ե.Գ.Մ. Հոգաբարձութեան անդամ Տիար Վաչէ Արթինեան, որմէ ետք Եկեղեցական թափօրը ուղղուեցաւ դէպի Առաջնորդարան, ուր կատարուեցաւ տնօրինէքի արարողութիւն:

**ԴԻՄՆ ԳԱՀԻՐԷԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ
Գահիրէ, 19 Յունուար 2016**

«ԱՐԵՎԻԿԱԿԱՅԵՐԷՆԸ 21-ՐԴ ԴԱՐՈՒՆ» ԳԻՏԱԺՈՂՈՎ՝ ՕՔՍՖՈՐԾ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻՆ ՄԷՋ



Վերջին տարիներուն, եւ մանաւանդ «ԻՆՏԵՍՔՕ»-ի կողմէ «վտանգուած լեզուներու» ցանկին մէջ դասուելէ յետոյ, արեւմտահայերէնի ապագան լուրջ մտահոգութեան նիւթ դարձած է Սփիւռքի տարածքին:

Թէեւ այդ ուղղութեամբ որոշ նախաձեռնութիւններ կան, ինչպէս Գալուստ Կիւլպէնկեան Զիմնարկութեան Զայկական Բաժանմունքին կողմէ հովանաւորուած ծրագիրները, որոնք լրջօրէն սկսած են ուսումնասիրելու, օրինակ՝ Սփիւռքի հայկական դպրոցներու իրավիճակը, արեւմտահայերէնը որպէս լեզու դասաւանդելու եւ անոր հետ կապուած բազմակողմանի հարցերը ու լուծումներու կարելիութիւնները:

Սակայն ներկայ դարաշրջանին՝ ստեղծուած աշխարհաքաղաքական եւ ընկերա-տնտեսական իրադարձութիւններն ու հանգամանքները, բացասական ազդեցութիւն կը ձգեն արեւմտահայերէնի ապագային վրայ: Այս գործօնները կը ստիպեն որ լեզուն դասաւանդուելէ եւ խօսուելէ զատ, պահպանուի նաեւ ընդհանրապէս արեւմտահայ մշակոյթի կենսունակութիւնը, որ իր մէջ կը ներառէ այդ լեզուով մտածող, ստեղծագործող եւ հրատարակող մտաւորականներու նոր սերունդ մը:

Այս եւ յարակից այլ հարցերու շուրջ քննարկումներ տեղի ունեցան այս

տարուան Յունուար 21-23-ը, Մեծն Բրիտանիոյ Օքսֆորտ համալսարանի Փեմպրուք գոլէճին մէջ, «Արեւմտահայերէնը 21-րդ Դարուն» խորագիրը կրող գիտաժողովին ընթացքին:

Գիտաժողովը կազմակերպուած էր Օքսֆորտ համալսարանի Գ. Կիւլպէնկեանի Անուան Արեւելագիտութեան Ամպիոնի Զայագիտական Բաժանմունքի Փրոֆեսոր՝ Թեօ Վան Լինտի եւ Օքսֆորտ համալսարանի Արեւելագիտութեան Բաժնի աշխատակից, ընկերաբան Զրաչ Զիլինկիրեանի կողմէ՝ Գալուստ Կիւլպէնկեան Զիմնարկութեան նիւթական օժանդակութեամբ:

Գիտաժողովին իրեց մասնակցութիւնը բերած էին արեւմտահայ գրողներ, մտաւորականներ, լեզուի մասնագէտներ եւ մամլոյ գործիչներ ու հրատարակիչներ:

Գիտաժողովը, որ գիտականին եւ տեսականին առններ, ուներ նաեւ գործնական եւ աշխատանքային բնոյթ, երեք օրերու ընթացքին 6 նիստով քննարկեց արեւմտահայերէնի զարգացման ու պահպանման խնդիրները, հետեւեալ հիւնք ծրագիրներով:

ա - Արեւմտահայերէնի ներկայ իրականութիւնը: Աշխարհաքաղաքական տագնապներու հետեւանքները եւ ընկերա-տնտեսական մաքառումներու ազդեցութիւնը արեւմտահայ մշակոյթի



ներկային ու յառաջիկայ տասնամեակներուն վրայ (օրինակ՝ Միջին Արեւելքի կացութիւնը եւ արեւմտահայաստանի մայրքներու դիմագրաւած բարդ մարտահրաւերները):

Նիստը վարեց Օքսֆորտ համալսարանի Արեւելագիտութեան Բաժնի աշխատակից, ընկերաբան, գիտաժողովի կազմակերպիչ Հրաչ Զիլինսկիւրեան: Երկու տարբեր աշխատանքային խումբերու քննարկումներուն իրենց մասնակցութիւնը բերին Փրոֆ. Անահիտ Տոնապետեան (INALCO Հիմնարկութեան մասնագետ, դասախօս), Ռազմիկ Փանոսեան (Գ. Կիւլպէնկեան Հիմնարկութեան Հայկական Համայնքներու Բաժնի Տնօրէն), Անի Կարմիրեան (մասնագետ՝ Գ. Կիւլպէնկեան Հիմնարկութեան Հայկական Համայնքներու Բաժինէն), Խաչիկ Թեօլեօլեան (Wesleyan համալսարանի Փրոֆ.), Յակոբ Կիւլլիւճեան (գրաքննադատ, UCLA համալսարանի Փրոֆ.) եւ Սագօ Արեան (գրող, «Արեւելք» կայքէջի խմբագիր):

Բ - Սփիւռքի մէջ արեւմտահայերէնով մտածելու-ստեղծագործելու խնդիրներն ու մարտահրաւերները՝ գրողին, ստեղծագործողին, ընթերցողին եւ ունկնդիրին համար:

Նիստը վարեց Թեօ Վան Լինտ (գիտաժողովի կազմակերպիչ): Քննարկումներուն զեկոյցներով հանդէս եկան Գրիգոր Պըլտեան (գրող, գրաքննադատ, դասախօս), Գրիգոր Մոմճեան (բանաստեղծ), Լոլա Գունտաքճեան (բանաստեղծ), Զրիստիան Բատիկեան (գրող), Մարկ Նշանեան (գրաքննադատ, դասախօս) եւ Անահիտ Սարգիսեան (բանաստեղծ):

Գ - Կառոյցներու եւ միջոցներու խընդիրները:

Նիստը վարեց Ռազմիկ Փանոսեան: Քննարկումներուն մասնակցեցան Գեորգ Պարտազճեան (Միջիկանի Անն Արպըր համալսարանի Հայ Գրականութեան Բաժնի վարիչ, դասախօս), Վարդան Մաթեոսեան (գրող, բանասէր), Գրիգոր Մոսկոֆեան (Լոնտոնի Հայագիտական Ու-

սումնասիրութիւններու Ծրագրի վարիչ) եւ Մարտիկ Զոլաքեան (հայկական թուային գրականութեան վերլուծական ծրագիրներու տնօրէն):

Դ - Արեւմտահայ հրատարակչութեան ներկայ խնդիրները ու ապագայ ակնկալութիւնները:

Նիստը վարեց Թոմ Սամուէլեան (Հայաստանի Ամերիկեան համալսարանի Հասարակական Գիտութիւններու Բաժնի տնօրէն): Քննարկումներուն մասնակցեցան Ժիրայր Դանիէլեան (Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Հայագիտական Կրթական Գրասենեակի վարիչ, խմբագիր, մատենագետ), Արամ Մեհրապեան (հիմնադիր-հրատարակիչ՝ «Սարգիս Խաչենց» մատենաշարի) եւ Մարտիկ Զոլաքեան:

Ե - Արեւմտահայ մամուլին (ելէկտրոնայինն ու համացանցայինը ներառեալ) այսօրուան եւ վաղուան դիմագրաւած առաջնահերթ խնդիրները եւ ապագայի մարտահրաւերները:

Նիստը վարեց Խաչիկ Թեօլեօլեան: Քննարկումներուն մասնակցեցան Վահագն Գարագաշեան («Հորիզոն» շաբաթաթերթի խմբագիր, բանաստեղծ), Շահան Գանտահարեան («Ազդակ» օրաթերթի խմբագրապետ), Սեւան Տէյիրմէնճեան («Ժամանակ» օրաթերթի խմբագիր) եւ Ժիրայր Զոլաքեան («Նոր Յառաջ» օրաթերթի գործադիր տնօրէն):

Ներկայ եղան նաեւ Անուշ Թրուանց («Ժամանակ» թերթի հայաստանեան թղթակից եւ «Արեւելք»ի լուրերու խմբագիր) եւ Փրոֆ. Վալենթինա Գալցօլարի (Ժընեւի համալսարան):

Հրաչ Զիլինսկիւրեան վարեց գիտաժողովի եզրափակիչ նիստը, որ յատկացուած էր գործնական առաջարկներու:

Իւրաքանչիւր մասնակիցէ խնդրուեցաւ, երկու օրուան քննարկումներէն ետք, երկու հիմնական առաջարկներ ներկայացնել:

Համադրեց՝ Շաքէ Մարգարեան



ՀԱՅ ԺՈՂՈՎՈՐԴԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ՃԱԲՈՆԵՐԷՆ

Հայ ժողովուրդի պատմության վերաբերեալ գրուած, ու թերեւս ամենէն մեծ տարածում ստացած գիրքը, ամերիկահայ երախտաշատ պատմաբան Ճորճ Պուռնուրեանի «Հայ ժողովուրդի Համառօտ Պատմութիւն» անգլերէն հատորն է:

Իր բնագիրով վեց անգամ վերահրատարակուած, ինչպէս նաեւ՝ սպաներէն, թրքերէն, արաբերէն, հայերէն եւ ռուսերէն թարգմանութիւններէ յետոյ, հատորն այժմ հրատարակուած է նաեւ ճաբոներէնով («Արումենիա-ձին Նո Ռեկիսի»): Հրատարակիչն է Թոքիոյի «Ֆուձիհարա-Շոտեն» հրատարակչութիւնը: Թարգմանութիւնը կատարած է Տախսակու Վադանապէ՛ն՝ Կոմակի Շոհէիի համագործակցութեամբ: 528 էջերէ բաղկացող հատորն արդէն իսկ տրամադրելի է Ամազոն կայքի ճաբոնական տարբերակին մէջ:

Ճորճ Պուռնուրեան ծնած է 1941-ին, Իրանի Սպահան քաղաքը, հայրը եղած է պաքուցի հայ, մայրը՝ լեհուհի:

Թեկնածուական աստիճանը ստացած է 1976-ին, Լոս Անճելըսի Գալիֆորնիայի համալսարանէն՝ որպէս հայոց, իրանական եւ ռուսական պատմութեան մասնագետ:

Ան հայոց եւ իրանական պատմութիւն դասաւանդած է հետեւեալ համալսարաններուն մէջ՝ Գալիֆորնիայի, Քոլումպիայի, Թաֆթսի, Քոնէքթիքուէթի, Նիւ Եորքի, Ռաթգերսի, Ֆրեզնոյի, ինչպէս նաեւ Ռամապօ եւ Կլէնտլէյի համայնքային գոլէճներուն մէջ:

1989 թուականէն Արեւելեան Եւրոպայի եւ Միջին Արեւելքի պատմութեան աւագ դասախօս է, Նիւ Եորքի Այոնա գոլէճին մէջ: Վարպետօրէն կը տիրապետէ հայերէն, ռուսերէն, պարսկերէն եւ լեհերէն լեզուներուն: Դասախօսութիւններով հանդէս եկած է ԱՄՆ-ի, Գանատայի, Իրանի եւ Աւստրալիոյ տարբեր քաղաքներուն մէջ:

Պուռնուրեանի գիտական հետաքրքրութիւնները կը ներառեն 17-19-րդ դարերու հայ ժողովուրդի, մասնաւորաբար Արեւելեան Հայաստանի պատմութիւնը: Ան հեղինակ է առանձին գիրքերով լոյս տեսած անգլերէն մենագրութիւններու. «Արեւել-

եան Հայաստանը Պարսից Տիրապետութեան Վերջին Տասնամեակներուն. 1807-1828» (1982 թ.), «Երեւանի Խանութիւնը Ղաջարական Տիրապետութեան Ներքոյ, 1795-1828» (1992 թ.), «Հայ ժողովուրդի Պատմութիւն, I. Նախապատմութենէ Մինչեւ 1500 թ.» (1993 թ., երեք հրատարակութիւն մինչեւ 2000 թ.), «Հայ ժողովուրդի Պատմութիւն, II. 1500 թ. Մինչեւ Ներկան» (1994 թ., երեք հրատարակութիւն մինչեւ 2000 թ.), «Ղարաբաղի Պատմութիւնը» (1994 թ., նոյնը՝ պարսկերէն, 2003 թ.): Կազմած է հրատարակած է «Ռուսաստանը եւ Անդրկովկասի Հայերը, 1797-1889. Վաւերական Փաստաթղթեր» (1998 թ.) եւ «Հայերը եւ Ռուսները, 1626-1796. Վաւերական Փաստաթղթեր» (2003 թ.) ժողովածուները:

Պուռնուրեանի ստորագրութեամբ ԱՄՆ-ի եւ Մեծն Բրիտանիոյ հայագիտական, իրանագիտական, կովկասագիտական տարբեր հանդէսներու մէջ հրատարակուած են բազմաթիւ յօդուածներ եւ գրախօսականներ: Անգլերէնի թարգմանած է հայոց պատմութեան վերաբերեալ բազմաթիւ գիրքեր:

Ճորճ Պուռնուրեանի հետաքրքրութիւնները կը ներառեն նաեւ դասական դաշնամուրային երաժշտութիւնը եւ շարժանկարը, որոնց վերաբերեալ յօդուածներով հանդէս եկած է տարբեր հայկական եւ ոչ հայկական թերթերու եւ ամսաթերթերու մէջ:

Քանի մը տարի առաջ, Թոքիոյի մէջ հանդէս գալով դասախօսութիւններով, Ճորճ Պուռնուրեան պայմանագիր ստորագրած է «Ֆուձիհարա-Շոտեն» հրատարակչութեան հետ՝ իր աշխատութիւնը ճաբոներէն հրատարակելու համար:

Թարգմանիչ, երիտասարդ հայագետ Տախսակու Վադանապէի հետ Պուռնուրեան ծանօթացած է Երեւանի մէջ, 2012-ին: Թոքիոյի Օտար Լեզուներու Համալսարանի շրջանաւարտ Տախսակու Վադանապէ, Հայոց Լեզուի դասընթացքներու յաճախած է՝ Թոքիոյի, Վենետիկի եւ Երեւանի մէջ, իբրեւ աւարտական թեզ գրած է «Հայ Հասարա-



ԳԱՀԻՐԷԻ ՀԱՐՄ-Ի «ԾԻԱԾԱՆ» ՄԱՆԿԱԳԱՏԱՆԵԿԱՆ ԵՐԳՉԱԽՈՒՄԱՐԸ ԿԸ ԴԻՄԱՆՈՐԷ ԿԱՂԱՆՂ ՊԱՊԱՆ



Ինչպես ամեն տարի, այս տարի եւս, Շաբաթ, 16 Դեկտեմբեր 2015-ին, Գահիրեի ՀԱՐՄ-ի Ծիածան Երգչախումբի անդամները, իրենց հերթական փորձին ընթացքին, ընդունեցին Կաղանդ Պապայի այցելութիւնը, զոր աւանդութիւն դարձած է Երգչախումբին հիմնադրութենէն ի վեր:

«Ծիածան» Երգչախումբի գեղարուեստական ղեկավար՝ Սօ. Միհրան Ղազէլեան եւ իր ազնուափայլ կողակիցը՝ խմբավար Գոհար Ղազէլեան, ինչպէս նաեւ Գահիրեի ՀԱՐՄ-ի օժանդակ անդամուհիներ՝ Տիկին Ռուպինա Նորարեւեան եւ Տոքթ. Արփի Խաչերեան, որոնք կազմակերպած էին սոյն

ձեռնարկը, «Ծիածան» Երգչախումբի անդամներուն հետ միասնաբար, տօնական, խանդավառ մթնոլորտի մը մէջ դիմաւորեցին Կաղանդ Պապան:

Երգեցին, զուարճացան, ապա Կաղանդ Պապան, ուրախութեան ծիւցերուն ընդմէջէն, սկսաւ բաշխել իր բերած նուէրները:

Ի վերջոյ, բոլորը միասին նկարուեցան բեմին վրայ, շօրավար Անդրանիկի նկարին առջեւ, որուն նուիրուած պիտի ըլլայ Երգչախումբին յաջորդ ելոյթը:

Շնորհաւոր Նոր Տարի:

**ՀԱՐՄ-ի կայքէջէն քաղեց՝
Անայիս Ճիգմեճեան**

շար. էջ 15 էւ →

կուրսինը Րաֆֆի «Խենթը» Վեպին Մէջ» վերնագրով աշխատանքը, նաեւ ճաբոներէնով յօդուած մը հրատարակած է՝ Րաֆֆիի մասին:

2011-2013 թթ. Վաղանապէ ուսումնառութիւնը շարունակած է Հայաստանի մէջ: Անգլերէնէ ճաբոներէնի թարգմանած է Յովհաննէս Փիլիկեանի «Ծովանկար Իմ Սօր Օրուան Մասին» հայապատում բանաստեղծութիւնը, որ ընդգրկուած է այդ ստեղծագործութեան բազմալեզու հրատարակութեան մէջ (2012 թ., Երեւան): Տախսակու Վաղանապէ նաեւ ճաբոներէնէ հայերէնի թարգմանած է ճաբոնի Արտաքին

Գործոց Նախարարութեան արխիւային նիւթերը՝ ճաբոնաբնակ հանրային գործիչ եւ գրող Տիանա Աբգարի մասին:

Նշենք որ Ճորճ Պուռնութեանի «Հայ Ժողովուրդի Համառօտ Պատմութիւն» գիրքին վերջին՝ վեցերորդ հրատարակութենէն վաճառուած է աւելի քան քսան հազար օրինակ: ԱՄՆ-ի բարձրագոյն կրթութեան բազմաթիւ հաստատութիւններէն ներս, հատորը որպէս դասագիրք կը գործածուի:

Այս տարի լոյս պիտի տեսնէ գիրքին պարսկերէն թարգմանութիւնը:

**Արծուի Բախչիսեան
«ԱԶԳ» շաբաթաթերթ**

Ս. ԹԵՐԵԶԱՅԻ 2015-Ի ՏԱՐԵԿԱՆ ՄՐՑԱՇԱՐ-ԲԸ

Ուրբաթ, 13 Նոյեմբեր 2015-ին, սկսաւ անցնող տարուան Եգիպտահայ Պասքէթպօլի վերջին մրցաշարքը, կազմակերպութեամբ Ս. Թերեզա Մարգական Սրահին եւ մասնակցութեամբ Գահիրէէն ու Աղեքսանդրիայէն մնացեալ չորս հայկական մարզական ակումբներուն:

Մրցաշարքը կը վայելէր հովանաւորութիւնը Գերայ. Գրիգոր Օգոստինոս Ս. Եպս. Գուսանի՝ Առաջնորդ Աղեքսանդրիոյ Թեմի Կաթողիկէ Հայոց եւ Գերշ. Տ. Աշոտ Ս. Եպս. Մնացականեանի՝ Բարեխնամ Առաջնորդ Եգիպտոսի Հայոց Թեմին ու նախագահութիւնը Տեր եւ Տիկին Ալէն Աբրահամեանի:

Ուրբաթ օրուան յայտագրին վրայ երկու մրցում կար:

Առաջինը, որ Գահիրէի եւ Աղեքսանդրիոյ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻներուն միջեւ էր, սաստիկ միակողմանի ըլլալուն, հետաքրքրական չէր: Գահիրէի խումբը խաղաց գրեթէ իր բոլոր պատանի մարզիկներով, իսկ Աղեքսանդրիոյ խումբին մարզիկներուն անհաւասար մակարդակը անյաջող խաղարկութեան պատճառ դարձաւ:

Մրցումը աւարտեցաւ ի նպաստ Հելիոպոլսոյ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻն 96-39 արդիւնքով:

Օրուան երկրորդ մրցումը ՀՄԸՄ Կամքի ու հիւրընկալ ակումբի խումբերուն միջեւ էր: Հակառակ որ Ս. Թերեզայի խումբը կը խաղար իր իսկ դաշտին վրայ, սակայն ձախող արձակումները բազմաթիւ էին: Խումբը կարծեք աններդաշնակութենէ կը տառապէր, սակայն Կամքի խաղարկութիւնը աւելի եւս անյաջող ըլլալուն, Ս. Թերեզայի տղաքը յաղթեցին 51-43 արդիւնքով ու անմիջապէս անցան Կիրակի օրուան աւարտականին:

Ս. Թերեզա ակումբը երեք տղոց խումբէն զատ, ուրիշ ոչ մէկ տեսակի կամ տարիքի խումբ չունենալուն պատճառով, մրցաշարքի երեք օրերուն ընթացքին միայն երեք տղոց եւ վեթերաններու մրցումներ տեղի ունեցան: Ակումբին ժրաջան վարչական Պր. Գրիգոր Միքայէլեան, բոլոր մրցումներէն առաջ, բարձրախօսը ձեռքին ներկայացուց մարզիկները, մարզիչներն ու պատասխանատուները՝ շատ անմիջական ու հաճելի կերպով:

Շաբաթ, 14 Նոյեմբերին, Գերայ. Գրիգոր Օգոստինոս Ս. Եպս. Գուսան գնահատանքի խօսք արտասանեց Պր. Գրիգոր Միքայէլեանի



նի հասցէին, որ տարիներէ ի վեր եղած է անփոխարինելի տարր մը ակումբէն ներս՝ իբրեւ մարզիկ, վարչական եւ երեք տղոց խումբին պատասխանատու: Մեծ յուզումով Գրիգորը ստացաւ յիշատակի յուշանուէրը:

Ժամանակը եկած էր Հելիոպոլսոյ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ եւ ՀՄԸՄ Արարատի միջեւ կայանալիք մրցումին: Արարատի տարեց մարզիկները խումբէն քաշուած ըլլալով, այլեւս խաղը վստահուած էր խումբին պատանիներուն, որոնք տակաւին բաւական փորձառութեան կը կարօտէին:

Գալով ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻն, ան ալ երիտասարդներէ ու պատանիներէ բաղկացած էր, ուստի խաղը շատ արագ էր: Մի քանի երկվայրկեանի ընթացքին, սրընթաց անցումներով գնդակը մէկ կողովէն միւսին կը հասներ, սակայն առանց արդիւնքի: Ստոյգ արձակումներ զոհ կ'երթային հապճեպին: Երկրորդ քառորդախաղը աւարտեցաւ ի նպաստ Հելիոպոլսոյ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻն 34-19 արդիւնքով: Մինչեւ երրորդ քառորդախաղին աւարտը, ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ տղաքը բաւական առաւելութիւն ապահովելէ ետք, կարծեք բախտը լքեց զիրենք: Իրերայաջորդ ձախող արձակումներու պատճառով ու Արարատի տղոց յանկարծակի զարթոնումով, արդիւնքի տարբերութիւնը սկսաւ նուազիլ ու քիչ մնաց որ մրցումին ճակատագիրը փոխուէր:

Սակայն մրցումը աւարտեցաւ ի նպաստ Հելիոպոլսոյ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻն 59-53 արդիւնքով:

Կիրակի օրուան առաջին մրցումը ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ, ՀՄԸՄ Արարատի եւ Ս. Թերեզայի վեթերաններէն կազմուած երկու խումբերու միջեւ էր: Մարզիկները բաւական լաւ խաղարկութիւն ցուցաբերեցին ու կարողացան ժողովուրդին հետաքրքրութիւնը գրաւել:



ՀԵԼԻՈՊՈԼՍՈՅ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ ԿԱՂԱՆՂԻ ՊԱՋԱՐԸ



Ուրբաթ, 25 Դեկտեմբեր 2015-ի կ.ե. ժամը 1:30-ին, Տիկին Սեդա Ներսիսյան բացումը կատարեց Հելիոպոլսոյ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ Տիկնանց Յանձնախումբին կազմակերպած Կաղանդի Պազարին:

Սրահին մեջ քով-քովի շարուած սեղանները բեռնաւորուած էին խմորեղէններով, անուշեղէններով, հայկական թոփիկով, ապուխտով, երշիկով, տուրմերով, անուշներով ու Կաղանդի շրջանին տուները զարդարող ծածկոցներով, փոքրիկ տօնածառերով եւայլն...:

Սեղաններուն ետին, ակումբին պարմանուիները, երիտասարդուիներն ու յանձնախումբի տիկիները հազիւ կը հասներին ներկաներուն ընտրած ապրանքները տոպրակներուն մէջ դնելու:

Կարճ ժամանակի ընթացքին սեղաններէն շատերը բոլորովին դատարկուեցան ու հոծ թիւով ներկաները, պարտեզի տաքուկ արեւին տակ նստան ճաշելու: Օդը նպաս-

տաւոր ըլլալուն, ժամանակը անզգալաբար սահեցաւ: Ժամը 5 էր, երբ տեղի ունեցաւ վիճակահանութիւնը, որուն յաջորդեց Կաղանդ Պապային այցելութիւնը:

Ալեւոր ու շատ յոգնած Կաղանդ Պապան, փոքրիկներով շրջապատուած, դանդաղ քայլերով եկաւ բազմելու թիկնաթոռին վրայ: Անցած են այն ժամանակները երբ փոքրիկները կը վախնային ու կը խրտչէին Կաղանդ Պապայէն: Հիմա, մէկը միւսէն աւելի համարձակ, կ'արտասանէին ու պատասխաններ կու տային Կաղանդ Պապային հարցումներուն:

Յետոյ անոնք, ձեռքերնուն կարմիր տոպրակներու մէջ լեցուած նուերներով, ուրախ-գուարթ հրաժեշտ տուին Կաղանդ Պապային:

Վարձքը կատար ակումբի Տիկնանց Յանձնախումբին անդամուիներուն, այս յաջող պազարին համար:

Սօսի Ներսիսյան-Յակոբեան

շար. էջ 17 էւ →

Աւարտականը Հելիոպոլսոյ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ եւ Ս. Թերեզայի խումբերուն միջեւ էր: ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ խումբը գերազանց խաղարկութեամբ լաւ մրցում մը հրամցուց մարզասեր հասարակութեան ու յաղթեց 77-32 արդիւնքով:

Մրցումին բաժակը նուիրուած էր Ս. Թերեզայի վարչութեան կողմէ՝ ի յիշատակ ննջեցեալ Մօրիս Պազի Հալլալի, իսկ մետալները

նուիրած էին Տէր եւ Տիկին Վարդ Ալեքսանեան: Այսպիսով, Հելիոպոլսոյ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ տիրացաւ 2015-ի հինգ բաժակներուն:

Կը շնորհաւորենք խումբին երկարամեայ պատասխանատու՝ Պր. Յակոբ Գարակեօգեանը եւ օգնական Պր. Զրիս Սիմոնեանը, ինչպէս նաեւ մարզիչ Ամր Աշուրը, իրենց տալիս աջակցութիւնը համար:

Սօսի Ներսիսյան-Յակոբեան

ԽԹՄԱՆ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆ ՀԵԼԻՈՊՈԼՍՈՅ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԷՆ ՆԵՐՍ



Քանի մը տարիէ ի վեր, ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ ակումբին մէջ Ծնունդի խթումի տօնակատարութիւնը անանդութիւն դարձած է, եւ սկսած է մեծ ժողովրդականութիւն վայելել: Հոծ թիւով անդամներ ու համակիրներ կը փութան չգրկուելու այս ձեռնարկէն:

Երիտասարդներու ու պատանիներու ստուարաթիւ ներկայութիւնը աւելի եւս փայլ կու տար այս տօնակատարութեան:

Սրահին տարածութիւնը սահմանափակ ըլլալով, պէտք եղած էր դուրսի մասը վրանով ծածկել՝ սեղաններն ու աթոռները հանգիստ կերպով տեղաւորելու համար, սակայն վերջին օրը մասնակցիլ փափաքողներուն թիւը այնքան աւելցաւ որ դարձեալ խճողում կար:

Երիտասարդներուն ու պատանիներուն տրամադրուած էր սրահին դուրսի բաժինը, երգիչ ժորժ Գարգուրին ու պարահարթակին կից, իսկ ոչ երիտասարդներուն՝ աղմուկէն հեռու, ներսի բաժինը:

Սրահէն տօնական մթնոլորտ կը բուրեր: Ճերմակ ծածկոցներով սեղաններ, գեղեցիկ Կաղանդի պսակներով ու մոմերով զարդարուած, պատերը պզտիկ, փայլուն լոյսերու վարագոյրներով պատուած ու առաստաղէն

մեծ, կարմիր, պսպղուն աստղեր կախուած:

Ժամը 9:30-էն սկսեալ, խորտիկներով բեռնաւորուած սեղաններուն շուրջ բոլորեցան ներկաները ու շուտով սկսաւ ընթրիքի սպասարկութիւնը, որ կատարուեցաւ արագ ու անթերի կերպով:

Երգիչին կատարած ֆրանսերէն, անգլերէն ու իտալերէն սիրուած երգերը խանդավառեցին ներկաներէն շատերը, որոնք պարահարթակը լեցուցին: Շուտով լսուեցաւ DJ-ին հնչեցուցած Թաթային աշխոյժ շուրջպարերը, որոնք երիտասարդներն ու պատանիները եւս կանչեցին պարի:

Կես գիշերը շատոնց անց, տեղի ունեցաւ վիճակահանութիւնը եւ 15 բախտաւոր ներկաներ ստացան պարգեւներ:

Երեկոն տակաւին կը շարունակուէր մեծ աշխուժութեամբ, երբ առաւօտեան 2-ին սրահը ակամայ դատարկուիլ սկսաւ:

Վարձքը կատար Հելիոպոլսոյ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ վարչականներուն, նաեւ Տիկնանց Յանձնախումբի անդամուհիներուն, որոնք այս բարձրորակ ձեռնարկը կազմակերպեցին:

Սոսի Ներսէսեան-Յակոբեան



ԵԳԻՊՏԱՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԸ ՄԻԱՄՆԱԲԱՐ ԿԸ ՏՕՆԱԽՄԱՔԷ ՆՈՐ ՏԱՐԻՆ



Որքան գովելի եւ հիանալի երեւոյթ: Եգիպտահայ չորս ակումբներ եւ մշակութային միութիւններ՝ ԶՄԸՄ-ԱՐԱՐԱՏ, Զելիոպոլսոյ ԶՄԸՄ ՆՈՒՊԱՐ, Կոկանեան Սրահ եւ Յուսաբեր, համախմբուեցան եւ սիրական օժանդակութեամբ Գահիրէի Ազգային Իշխանութեան Զաղաքական Ժողովին, կազմակերպեցին Նոր Տարուան յաջող տօնակատարութիւն մը, Գահիրէի օդակայանի մօտ գտնուող «Novotel» պանդոկին մէջ, որուն ներկայ եղան մօտ 400 եգիպտահայեր՝ համայնքի բոլոր ծանօթ դէմքերը:

Հիգշաբթի, 31 Դեկտեմբեր 2015-ին, երեկոյեան ժամը 9.30-էն սկսեալ, մասնակիցները խումբ առ խումբ սկսան մուտք գործել շքեղօրէն զարդարուած ընդարձակ սրահը, ուր կը տիրէր տօնական մթնոլորտ մը: Շնորհիւ «D.J» Արմէնին շէնշող երաժշտութեան, պարահարթակը երբեք չդատարկուեցաւ: Ամբողջ գիշերը ներկաները պարեցին եւ զուարճացան, մինչեւ Նոր Տարուան առաջին ժամերը, երբ սկսաւ վիճակահանումը՝ Տիկին Մարլին Աւանտանի ղեկավարութեամբ եւ բախտաւորները

ստացան այլազան ճոխ նուէրներ:

2016-ի արեւածագին առաջին շողերուն հետ վերջացաւ տօնախմբութիւնը, եւ ներկաները մեկնեցան՝ հաճելի եւ յիշատակելի պահեր վայելած ըլլալու գոհունակութեամբ, մաղթելով որ կրկին տեղի ունենան այսպիսի տպաւորիչ միացեալ ձեռնարկներ:

Կազմակերպիչ յանձնախումբը կը բաղկանար իւրաքանչիւր ակումբէ երեք կամ չորս ներկայացուցիչներէ, որոնք վերջին շաբաթները կանոնաւորապէս կը հաւաքուէին՝ լուծելու համար կազմակերպչական զանազան հարցերը. հրաւերներ, տեղերու ապահովում, զարդարանք, երաժշտութիւն, նուէրներ եւայլն:

Շնորհաւորելի եւ գնահատելի է կազմակերպիչ յանձնախումբին տարած այս բժախնդիր աշխատանքը, որ մեծապէս գնահատուեցաւ ներկաներուն կողմէ:

Շնորհաւոր Նոր Տարի եւ Սուրբ Ծնունդ:

**ԶԲԸՄ-ի կայքէջէն քաղեց՝
Անայիս Ծիգմեճեան**

ԱՆԴԱՄԱԿԱՆ



ԱՄՈՒՄՆՈՒԹԻՒՆ

Հաճոյքով կը տեղեկացնենք թէ Օր. Մերի Գարթալեանի եւ Պր. Խաչիկ Աւետանեանի Սուրբ Պսակի խորհուրդը տեղի ունեցաւ Գահիրէի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ մէջ՝ Շաբաթ, 9 Յունուար 2016-ին:

Օր. Մերին դուստրն է ԶԲԸՄ-ի Աղեքսանդրիոյ Մասնաճիւղին երկարամեայ վարչական եւ Գահիրէի ԶԲԸՄ-ի Աղեքսանդրիոյ գործավար Պր. Նազարէթ Գարթալեանի:

Ձերմօրէն կը շնորհաւորենք ամուսնացեալ զոյգը եւ մեր խնդակցութիւնը կը յայտնենք իրենց ծնողներուն՝ Տէր եւ Տիկին Նազարէթ Գարթալեանի ու Տէր եւ Տիկին Յակոբ Աւետանեանի:

Թող ամուսնացեալ զոյգին կեանքը ընթանայ յարատեւ յաջողութիւններով:



ՄԱՅԱԳՐՈՒԹԻՒՆ

Յաւով կը տեղեկացնենք թէ 15 Դեկտեմբեր, 2015-ին, կեանքէն հեռացած է Միութեանս անդամուհիներէն Օր. Փերուզ Զեօհնէլեան:

Ան սերտօրէն կապուած էր մեր եկեղեցիին, ուր ամէն Կիրակի եւ տօնական օրերուն կարելի էր հանդիպիլ իրեն:

«Տեղեկատու» իր ցաւակցութիւնները կը յայտնէ ողբացեալին ընտանեկան բոլոր պարագաներուն:

Խոր կսկիծով կ'արձանագրենք մահը Տիկին Զարուհի Պէքերճեան-Զօրայեանի, որ տեղի ունեցած է 12 Յունուար, 2016-ին:

Ան երկար տարիներ եռանդուն հասարակական գործունէութիւն ունեցած է Հայկական Ընթերցասրահի եւ Գալուստեան Ազգային Վարժարանի Տիկնանաց Խնամակալութեան մէջ:

«Տեղեկատու» իր ցաւակցութիւնները կը յայտնէ ողբացեալին փեսաներուն եւ դստեր՝ ԶԲԸՄ-ի Գահիրէի Վարչութեան երկարամեայ անդամ Տիար Մարտիրոս Պալաեանի եւ Տէր եւ Տիկին Հայկ եւ Այտա Նազաշեանի, ինչպէս նաեւ ընտանեկան բոլոր պարագաներուն:

